

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ

ԿԵՐՊԻ/ԺԱՍԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՇՈՒՄԵՐԵՐԵՆՈՒՄ, ԷԼԱՍԵՐԵՆՈՒՄ, ԽՈՒՌԻԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ

Հոդվածի նպատակը Առաջավոր Ասիայի մի շարք հին լեզուների՝ շումերերենի, էլամերենի, խուիերենի և ուրարտերենի կերպա-ժամանակային համակարգերի ձևավորման ընթացքի վերականգնումն է և նրանցում նկատվող ընդհանրությունների և առանձնահատկությունների մատնանշումը:

Տարբեր ծագումնաբանության այս լեզուների համատեղ քննությունը պայմանավորված է նրանց տիպաբանությամբ. նախանոմինատիվ (երգատիվ) տիպի այս լեզուները հանդես են բերում որոշակի կառուցվածքային ընդհանրություններ, որոնց բացահայտումը տիպաբանական լեզվաբանության կարևոր խնդիրներից է:

Շումերերեն

Քանի որ շումերերենի կերպային համակարգը համաժամանակյա և տարածամասնակյա տեսանկյուններից մանրամասնորեն քննարկվել է սույն մատենաշարի XXIII հատորում [Խաչիկյան Մ., 2004], կրկնությունից խուսափելու համար այստեղ կներկայացնենք միայն լեզվի նախագրային շրջանում անցած զարգացման ենթադրյալ ընթացքը, որը հանգեցրել է գրավոր աղբյուրներում վկայված համակարգի ձևավորմանը, տե՛ս աղյուսակ 1, վալ III:

*Աղյուսակ 1
Շումերերեն բայի խոնարհումը*

I փուլ	Գործողության բայ		Վիճակի բայ
	Անցողական	Անանցողական	
	* ¹ R-e ²		*R-Ø
II փուլ	Անցողական բայ		Անանցողական բայ
	*R-c		*R-Ø
III փուլ	Կատարյալ կերպ (երգատիվ)	Անկատար կերպ (ոչ-երգատիվ)	Անանցողական բայ
	-n/b ³ -R-Ø ⁴	R-c	R-Ø

Ծանոթագրություններ

1. Աստղանիշով նշված են վերականգնված ձևերը:

2. Այստեղ և ստորև հոդվածը ավելորդ տեղեկություններով չծանրաբեռնելու նպատակով բերում ենք միայն 3 դեմքի սուբյեկտային ցուցիչները, մանավանդ որ հատկապես 3 դեմքի ձևերում է ի հայտ գալիս մեր քննության համար առավել հետաքրքրություն ներկայացնող սուբյեկտային ցուցիչների տարբերակումը՝ բայի իմաստով պայմանավորված:

3. Կատարյալ խոնարհման սուբյեկտային նախածանցային ցուցիչները անկատար խոնարհման հարացույցում հանդես են գալիս օբյեկտի դերում:

4. Աբսոլյուտիվ շարքի օբյեկտային ցուցիչ:

Շումերերեն բայի զարգացման փուլերը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

I փուլ՝

ա/ գործողության բայերը հակադրված են վիճակի բայերին, ինչը հետևում է գործողության սուբյեկտի -e և վիճակի սուբյեկտի -Ø ցուցիչների հակադրությունից (տե՛ս աղյուսակ 1);

բ/ բացակայում են կերպային (ասպեկտային) կամ ժամանակային տարբերություններ արտահայտող քերականական միջոցները:

գ/ այս փուլին կարելի է վերագրել նաև աղյուսակում արտահայտություն չգտած գործողության կերպը (Aktionsart) բնութագրող տարբեր բառակազմական կամ բառապաշարային միջոցները (ռեդուպլիկացիա, սուպլյետիվ արմատներ), ինչպես նաև ըզձական/հարկադրական իմաստ արտահայտող և բայաձևին ապառնի ժամանակի իմաստ հաղորդող -ed- եղանակային ածանցը, որը վկայված է ինչպես անցողական, այնպես էլ անանցողական գործողության բայերի հետ, տե՛ս [Խաչիկյան Մ., 2004, էջ 499]:

II փուլ՝ լեզվի տիպաբանական զարգացումը հանգեցնում է նախորդ փուլին հասնուկ գործողություն : վիճակ հակադրության թուլացման և բայերի վերաբաշխման ըստ անցողականության (ներգործական սեռ): անանցողականության (չեզոք սեռ) հատկանիշի, որ հասնուկ է երգատիվ կառուցվածքի լեզուներին: Այդ վերաբաշխման արդյունքում գործողություն արտահայտող բայերի զանգվածը տրոհվում է. անցողական գործողություն արտահայտող բայերը ներկայանում են առանձին՝ ներգործական սեռի բայերի խմբով, մինչդեռ անանցողական գործողության բայերը վիճակ արտահայտող բայերի հետ միասին կազմում են անանցողական բայերի խումբը: Համապատասխանաբար գործողության սուբյեկ-

տի ցուցիչ –e-ն, վերահիմաստավորվում է ներգործական սեռի բայի, իսկ վիճակի սուբյեկտի ցուցիչ –Ø-ն՝ չեզոք սեռի բայի սուբյեկտի ցուցիչ;

III փուլ՝ ի տարբերություն մախորդ փուլերին հատուկ մեկ միասնական վերջածանցային խոնարհման, նշանավորվում է նոր՝ երգատիվ խոնարհման ձևավորմամբ՝ մախածանցային սուբյեկտային (երգատիվ շարքի) և վերջածանցային օբյեկտային (արսոյուտիվ շարքի) ցուցիչներով, որոնք համընկնում են չեզոք սեռի բայերի սուբյեկտային ցուցիչների հետ (տե՛ս աղյուսակ 1): Այսպիսով, վիճակի սուբյեկտային ցուցիչները (I փուլ), վերահիմաստավորվելով չեզոք սեռի սուբյեկտային ցուցիչների (II փուլ), III փուլում վերածվում են երգատիվ տիպաբանության լեզուներին հատուկ արսոյուտիվ շարքի ցուցիչների: Իսկ քանի որ բարձր անցողականության (high ergativity) հատկանիշներից է, բացի երգատիվությունից, մաս կատարյալ կերպը [Hopper P. J. & Thompson S. A., 1980, p. 252], ապա զարմանալի չէ, որ նոր՝ երգատիվ խոնարհման ձևերը արտահայտում են կատարյալ կերպի իմաստ ի հակադրություն մախորդ փուլերից ժառանգված մախ գործողության բայերի (I փուլ), իսկ ապա ներգործական սեռի բայերի (II փուլ) խոնարհման, որի միջոցով այսուհետ արտահայտվում է անկատար կերպի իմաստը:

Այսպիսով, երգատիվ խոնարհման ի հայտ գալով ձևավորվում է շումերական տեքստերից մեզ հայտնի կերպային համակարգը, որի համար հատկանշական է կերպի քերականական արտահայտությունը միայն ներգործական սեռի բայերի ոլորտում:

Էլամերեն

Էլամերենի կերպա-ժամանակային համակարգը մեզ ներկայացնում է հետևյալ տեսքով (աղյուսակ 2, փուլ III). բային հատուկ է երկու ժամանակ՝ կատարյալ/անցյալ : անկատար/ոչ-անցյալ (ներկա/ապառնի), անցյալ ժամանակն ունի երկու խոնարհում՝ երգատիվ (անցողական) և արսոյուտիվ (անանցողական):

Անցյալ ժամանակի ներգործական՝ I խոնարհումը կազմվում է բայի հիմքին սուբյեկտային (երգատիվ) ցուցիչների կցումով: Նախադասության օբյեկտը արտահայտվում է բայաձևին մախորդող այսպես կոչված ռեզումպտիվ/անաֆորիկ դերանուններով (-r 3դ. ակտիվ/շնչավոր օբյեկտի դեպքում, -n՝ մնացած դեպքերում):

Անանցողական բայերի անցյալ ժամանակը բաղկացած է -k- ածանցով կազմված դերբայական հիմքից և սուբյեկտը արտահայտող դիմա-դասային ցուցիչներից: Անանցողական՝ II խոնարհման միջոցով արտահայտվում է ոչ միայն չեզոք, այլ մաս կրավորական սեռը: II խոնարհման բայաձևերին սովորաբար մախորդում են մույն այն ռեզումպտիվ դերանունները, որոնցով արտահայտվում է երգատիվ խոնարհման օբյեկտը: Այս դեպքում, սակայն, նրանք կատարում են ոչ թե օբյեկտի, այլ

սուրբեկտի դեր: Փաստորեն արաւյուտիվ (սուրբեկտա-օրբեկտային) շարքը ներկայացված է ռեգումպտիվ դերամոնմերով:

Ոչ-անցյալ ժամանակը արտահայտող ձևերը (III խոնարհում) կազմված են -ռ-ով դերբայական հիմքից և դիմա-դասային սուրբեկտային ցուցիչներից: Ուշադրության արժանի է տարբեր սուրբեկտային ցուցիչների գործածությունը II և III խոնարհման 3 դ. ձևերում. -Ø ցուցիչը ի հայտ է գալիս անցյալ ժամանակի չեզոք սեռի բայաձևերում, իսկ ակտիվ/շնչավոր դասի -ր ցուցիչը ոչ-անցյալ ժամանակաձևերում:

Ոչ-անցյալ բայաձևերը ունեն նաև ստորադասական (ըդուսկան, պայմանական և այլն) եղանակի իմաստ:

Բացի վերոհիշյալ երեք խոնարհումներից, էլամերենին հայտնի են նաև բայահիմքից և դասային ցուցիչներից կազմված բայական/դերբայական գոյականներ. *sunki-r* ‘արքա’, բառացի՝ ‘թագավորող’, *kar-nuški-r* ‘գանձապահ’, բառացի՝ ‘գանձարանը պահող’ և այլն:

Քանի որ ա/ II խոնարհման 3 դեմքի սուրբեկտը արտահայտված չէ ակտիվ գոյականների -ր դասային ցուցիչով, ի տարբերություն III խոնարհման ձևերից և դերբայական գոյականներից, բ/ II խոնարհման ձևերը արտահայտում են նաև կրավորական իմաստ, այլ կերպ ասած, գործողությունից բխող վիճակ, կարելի է ենթադրել, որ այս խոնարհումը սկզբնապես արտահայտում էր վիճակ, ինակտիվ էր:

Իսկ այն փաստից, որ չեզոք բայի 3 դ. հոգնակի ձևը կազմված է ոչ թե II խոնարհման դերբայական հիմքից, այլ բայահիմքից և 3 դ. հոգնակի դասային ցուցիչից (հմմ. *šinu-p* ‘ներանք գնացին’, ոչ թե **šinu+k-p*), կարելի է ենթադրել, որ սկզբնապես գործողության (ինչպես անցողական, այնպես էլ անանցողական) բայի ձևերը կազմվում էին բայահիմքին դիմա-դասային ցուցիչ կցումով:

Վերը ներկայացված տվյալների քննությունը թույլ է տալիս էլամերենում առանձնացնել կերպւս-ժամանակային համակարգի ձևավորման հետևյալ փուլերը.

I փուլ՝ բնութագրվում է գործողության և վիճակի բայերի հակադրությամբ: Գործողության բայը խոնարհվում է բայահիմքին, իսկ վիճակի բայը՝ -k-հիմքին դիմա-դասային ցուցիչների կցումով: Գոյություն ունեին նաև -ռ-հիմքից կազմված ստորադասական/անիրական եղանակային ձևեր:

II փուլ՝ լեզվում տեղի ունեցող բովանդային վտիտխությունների արդյունքում գործողություն : վիճակ հակադրությունը վերաիմաստավորվում է անցողականություն : անանցողականություն հակադրության և բայական բառապաշարը վերաբաշխվում է: ճոր սկզբունքի համաձայն: Ջերականորեն այդ վտիտխությունը արտահայտվում է, մի կողմից՝ անցողական գործողության բայերի առանձնացումով գործողության բայե-

րի զանգվածից, մյուս կողմից՝ անանցողական գործողության և վիճակի բայերի համախմբումով և II (սկզբնապես վիճակի) խոնարհման վերածումով անանցողական (չեզոք/կրավորական) խոնարհման:

Աղյուսակ 2
Էլամերեն բայի խոնարհումը

I փուլ	Գործողության բայ		Վիճակի բայ	Անիրական եղանակ (գործողության, մաս վիճակի* բայ)
	Անցողական	Անանցողական		
	*-R-r			
II փուլ	Անցողական բայ		Անանցողական (չեզոք/կրավորական) բայ	Անիրական եղանակ (անցողական և անանցողական բայ)
	*-R-r		*-R+k-Ø	*-R+n-r
III փուլ	Կատարյալ կերպ/անցյալ ժամանակ			Անկատար կերպ/ոչ-անցյալ (ներկա/ ապառնի) ժամանակ
	Անցողական բայ (I* էրգատիվ խոնարհում)		Անանցողական (չեզոք/կրավորական) բայ (II խոնարհում)	Անցողական և անանցողական բայ (III խոնարհում)
	*-R-š		-R+k-Ø	-R+n-r

III փուլ՝ նշանավորվում է ներգործական սեռի բայերի ոլորտում նոր՝ էրգատիվ խոնարհման ի հայտ գալով, որը զբաղեցնում է նախորդ փուլի ներգործական խոնարհման տեղը՝ դուրս մղելով այն բայական համակարգից անվանական: Այդ փոփոխությունը հիմք է հանդիսանում կերպա-ժամանակային համակարգի ձևավորման համար: Տեղի է ունենում հետևյալը.

ա/ էրգատիվ խոնարհման բայաձևերը ընկալվում են որպես կատարյալ կերպի/անցյալ ժամանակի ձևեր (դա պետք է բացատրել կատարյալ կերպի/անցյալ ժամանակի գաղափարի կապով բարձր անցողականության և, հետևաբար, էրգատիվության հետ, տե՛ս [Hopper P. J. & Thompson S. A., 1980, p. 252]);

բ/ համաբանությամբ անցյալի գաղափարը տարածվում է չեզոք/կրավորական խոնարհման վրա, մասնավորապես որ այդ խոնարհմանը հատուկ կրավորական իմաստը (որպես անցյալում կատարված գործողության արդյունք) նույնպես առնչվում է անցյալի գաղափարի հետ;

զ/ սահմանական եղանակի էրգատիվ և չեզոք խոնարհումների կատարյալ կերպի /անցյալ ժամանակի իմաստ ստանալուն համընթաց ստորադասական եղանակի խոնարհումը ձեռք է բերում անկատար կերպի/ռչ-անցյալ ժամանակի նշանակություն, որը սերտորեն կապված է անիրական իմաստի հետ (հմմ. *Կ* եղանակիչով ձևերի գործածությունը արևելահայերենում ապառնի և արևմտահայերենում ներկա ժամանակի իմաստով):

Խոտիներեն և ուրարտերեն

Տեքստերից մեզ հայտնի լեզվական նյութը արտահայտում է խոտիներենի զարգացման երկու փուլ, որոնք պայմանականորեն անվանել ենք հին և նոր: Եթե հին խոտիներենի դեպքում կարելի է խոսել կերպային տարբերությունների մասին, ապա նոր խոտիներենում գործ ունենք ժամանակային համակարգի հետ [Хачикян М. Л., 2005, с. 244-5]:

Աղյուսակ 3

Խոտիներեն և ուրարտերեն բայի խոնարհումը

I	Խոտ. Ուրարտ.	Գործողության բայ			Վիճակի բայ		
		Անցողական		Անանցողական			
		R+o ¹ -b/m		R+i ¹ -b, R+a ¹ -b			
II	Խոտ. Ուրարտ.	*R+o ¹ -b		R+i(a) ¹ -b, R+a ¹ -b	R-u ¹ -Ø		
		Անցողական բայ		Անանցողական բայ			
		R+o-b/m		R+i-b, R+a-b, R-u-Ø			
III	Խոտ. Ուրարտ.	R+o-Ø ² -ne ³		R+i(a)-b, R+a-b, R+u-Ø			
		Անցողական բայ		Անանցողական բայ			
		Անկատար	Կատարյալ				
IV	Խոտ.	R-ia ⁴	R+o-b/m	R+i-b, R+a-b, R+u-Ø			
		R-ia-/-c ⁴	R+o-Ø ² -ne ³	R+i(a)-b, R+a-b, R+u-Ø			
		Անցողական բայ		Անանցողական բայ			
V	Խոտ.	R-ia	R+oδ-a ⁴	R+cd-a ⁴	R+a/i-Ø ⁵	R+oδ+a/i ⁶ -Ø ⁵	R+cd+a/i ⁶ -Ø ⁵
		Անցողական բայ		Անանցողական բայ			
		Անկատար	Կատարյալ				

Ծանոթագրություններ

1. Բայի քեմատիկ ձայնավորի գործածությունը պայմանավորված է բայի բնույթով. —ո-ն անցուղական, կենտրոնախոյս գործողության

ցուցիչն է, -i(a)-ն՝ անանցողական, կենտրոնամետ, -a-ն՝ շարժման բայերի, -u-ն՝ վիճակի, տե՛ս [Khačikyan M., 1999, p. 258]:

2. Էրգատիվ շարքի 3 դ. սուբյեկտային ցուցիչը այս ձևում հանդես է գալիս -Ø ենթաձևության տեսքով:

3. -ne ձևորդը արտոլուտիվ շարքի 3 դ. եզակի թվի օբյեկտային ցուցիչն է:

4. Էրգատիվ շարքի 3 դ. ցուցիչ:

5. Գործողության սուբյեկտի -b/m ցուցիչը դուրս է գալիս գործածությունից՝ իր տեղը զիջելով վիճակի սուբյեկտի -Ø ցուցիչին:

6. -u վիճակի թեմատիկ ձայնավորով անցյալ և ապառնի ժամանակների ձևեր վկայված չեն:

Հին խոտիերենը կերպային տարբերություններ է հանդես բերում միայն անցողական բայի ոլորտում. անկատար կերպի ձևերում էրգատիվ շարքի ցուցիչները միանում են անմիջականորեն բայի հիմքին, կատարյալ կերպը կազմվում է դիմային ցուցիչների կցումով —o- թեմատիկ ձայնավորին: Վկայված են կատարյալ կերպի միայն 3 դ. ձևեր, որոնք լեզվի նախաէրգատիվ շրջանից ժառանգված ռելիկտային ձևեր են՝ -m/b գործողության սուբյեկտի ցուցիչով¹: Սակայն կասկածից դուրս է, որ կատարյալ կերպի խոնարհման մյուս դիմային ձևերը էրգատիվ էին: Նման պնդման համար հիմք է ծառայում անկատար կերպի ձևերի խոնարհման փաստը ըստ էրգատիվ մոդելի (էրգատիվության առնչությունը կատարյալ կերպի/անցյալ ժամանակի հետ [Hopper P. J. & Thompson S. A., 1980, p. 252] ենթադրում է, որ եթե որևէ լեզվում անկատար կերպը արտահայտվում է էրգատիվ խոնարհման միջոցով, ապա կատարյալ ձևերը նույնպես էրգատիվ են): Դա են հաստատում նաև ցեղակից ուրարտերենի տվյալները. ուրարտական տեքստերում բազմիցս վկայված 1 դ. եզակի և հոգնակի ձևերը էրգատիվ խոնարհման են:

Կատարյալ կերպի ձևերը հին խոտիերենում արտահայտում են անցյալի, անկատարինը՝ ինչպես ներկայի, այնպես էլ ապառնիի իմաստ: Ապառնի ժամանակի իմաստ են արտահայտում նաև անիրական եղանակի ձևերը, տե՛ս [Хачикян М. Л., 2005, с. 244]:

Հին խոտիերենի կերպային համակարգը գրեթե նույնությամբ կրկնվում է ուրարտերենում: Այստեղ ևս կատարյալ : անկատար հակադրությունը չի տարածվում չեզոք սեռի բայերի վրա, անցողական բայի ինչպես կատարյալ, այնպես էլ անկատար կերպի ձևերը էրգատիվ են, տե՛ս [Хачикян М. Л., 2005, с. 245]:

Նոր խոտիերենում հին փուլին հատուկ անկատար : կատարյալ հակադրությունը իր տեղը զիջում է ներկա : անցյալ : ապառնի հակադրությանը, որն ընդգրկում է ոչ միայն անցողական, այլև անանցողական բայերը: Ժամանակային ցուցիչներն են -Ø- (ներկա), -oš- (անցյալ), -ed-

(ապառնի): -օժ- և -ed- ածանցները վկայված են մաս եին խոռոհերենում, սակայն ոչ թե քերականական, այլ բառակազմական գործառնություն: Դա է վկայում կատարյալ կերպի -օժ- ածանցով և առանց այդ ածանցի, ինչպես մաս անկատար կերպի -ed- ածանցով և առանց այդ ածանցի ձևերի զուգահեռ գործածությունը: Այդ ածանցների հետագա վերաիմաստավորումը ժամանակային ցուցիչների թույլ է տալիս ենթադրել, որ, հավանաբար, -օժ- ածանցով արտահայտվում էր կատարված գործողության արդյունքը, իսկ -ed-ը բայաձևին հաղորդում էր լրացուցիչ եղանակային իմաստ (ցանկության/մտադրության) [Хачикян М. Л., 2005, с. 244-245]:

Խոռոհ-ուրարտական կերպա-ժամանակային համակարգի ձևավորումը, հավանաբար, ընթացել է հետևյալ կերպ.

I փուլ՝ բայական բառապաշարը բաժանված է գործողության և վիճակի բայերի: Այդ է վկայում, մասնավորապես, գործողության և վիճակի 3 դ. հզ. թ. տարբեր սուբյեկտային ցուցիչների գոյությունը հին խոռոհերենում և ուրարտերենում (տե՛ս աղյուսակ 3); գոյություն ունեն գործողությունը բնութագրող բառակազմական որոշ ածանցներ (դրանց թվին են պատկանում, մասնավորապես, -օժ- և -ed- ածանցները), սակայն բացակայում են կերպը/ժամանակը արտահայտող քերականական միջոցներ;

II փուլ՝ լեզվի էրգատիվացման հետևանքով գործողության բայերը տրոհվում են ըստ անցողականություն/անանցողականություն հատկանիշի և ձևավորվում է անցողական (էրգատիվ) խոնարհում, որը կազմվում է անցողականության -օ թեմատիկ ձայնավորին էրգատիվ սուբյեկտային ցուցիչների կցումով:

III փուլ՝ բարձր անցողականության սեմանտիկ կապի հետևանքով կատարյալ կերպի/անցյալ ժամանակի հետ (տե՛ս Hopper P. J. & Thompson S. A., 1980, p. 252) էրգատիվ խոնարհումը ձեռք է բերում կատարյալ կերպի իմաստ: Ի հակադրություն վերջինիս առաջանում է նոր՝ անկատար խոնարհում, որը տարբերվում է կատարյալից թեմատիկ ձայնավորի բացակայությամբ;

IV փուլ՝ միայն խոռոհերենին հատուկ այս վալում տեղի է ունենում կատարյալ : անկատար հակադրության չեզոքացում և կատարյալ կերպի խոնարհման (տե՛ս փուլ II) վերացում: Դրան համընթաց հին խոռոհերենում վկայված բառակազմական Aktionsart-ային -օժ- և -ed- ածանցները վերաիմաստավորվում են ժամանակային ձևողների. -օժ-ը վերածվում է անցյալ ժամանակի ցուցիչ, -ed-ը՝ ապառնիի: Ներկա ժամանակի ձևերում այդ ածանցները բացակայում են: Իսկ քանի որ այդ ցուցիչները ծագում են գործողությունը բնութագրող Aktionsart-ային ածանցներից, ապա նրանք գործածվում են ոչ միայն, ներգործական այլև չեզոք սեռի բայերի հետ: Այսպիսով, միայն ներգործական բայերի ոլոր-

տով սահմանափակված կերպային համակարգը փոխարինվում է ավելի ընդգրկուն ժամանակային համակարգով: Համապատասխան նյութի բացակայության պատճառով բաց է մնում այն հարցը, թե, արդյո՞ք, այս համակարգը տարածվել է նաև վիճակի բայերի վրա:

Շումերերենի, էլամերենի և խոտի-ուրարտերենի կերպա-ժամանակային համակարգերի ձևավորման ընթացքի համադրությունը թույլ է տալիս բացահայտել մի շարք ընդհանրություններ և տարբերություններ:

Բնավոր բոլոր լեզուներին սկզբնական փուլում հատուկ էր գործողություն : վիճակ հակադրությունը և կերպի/ժամանակի արտահայտման քերականական միջոցների բացակայությունը:

Հաջորդ փուլում այդ լեզուների հետագա զարգացման արդյունքում տեղի է ունենում անցողական բայերի անջատում գործողության բայերի զանգվածից, անցողական (երգատիվ) խոնարհման առաջացում և դրան համընթաց կերպային համակարգի ձևավորում:

Այս փուլից սկսած առանձին լեզուներում ի հայտ են գալիս որոշակի տարբերություններ.

ա/ կերպային տարբերությունները շումերերենում և խոտի-ուրարտերենում ի հայտ են գալիս ներգործական բայի ոլորտում, մինչդեռ էլամերենում այդ համակարգի մեջ ընդգրկվում է նաև չեզոք սեռի բայը;

բ/ երգատիվ խոնարհումը՝ երգատիվ շարքի ցուցիչներով, խոտի-ուրարտերենում տարածվում է ինչպես կատարյալ, այնպես էլ անկատար կերպի բայերի վրա, մինչդեռ շումերերենում և էլամերենում երգատիվ խոնարհումը սահմանափակված է կատարյալ կերպի ոլորտով, իսկ ներգործական սեռի անկատար կերպի և ցեզոք սեռի բայերի սուրյեկտային ցուցիչները նույնական են (3 դ. ձևերում ի հայտ եկող տարբերությունները ռեիկտային են՝ ժառանգված այն լիուլից, որի համար բնութագրական էր գործողություն : վիճակ հակադրությունը);

գ/ եթե շումերերենում և խոտի-ուրարտերենում երգատիվ ցուցիչները փոխառյալ են մախա-երգատիվ շրջանի լեզվաձևերից (շումերերենում երգատիվ շարքի ձևորդները համընկնում են ոչ-երգատիվ խոնարհման օբյեկտային ցուցիչների հետ, խոտի-ուրարտերենում ծագում են ստացական ածանցներից), ապա էլամերենի երգատիվ ցուցիչները միանգամայն ինքնուրույն են և նյութապես չեն առնչվում քերականական որևէ ձևորդների հետ:

ON THE FORMATION OF ASPECTS/TENSES
IN SUMERIAN, ELAMITE, HURRIAN AND URARTIAN

The author examines the aspectual/temporal systems of four non-nominative ancient languages - Sumerian, Elamite Hurrian and Urartian, pointing out the similarities and peculiarities of these systems.

In Sumerian the opposition perfective/past : imperfective/non-past covered only the sphere of the transitive verb. The perfective conjugation was ergative, the imperfective conjugation, as well as the intransitive one, was absolutive (the only difference between imperfective and intransitive conjugations is revealed in the 3rd person).

In Old Hurrian and Urartian, like in Sumerian, aspectual differences were limited to the transitive verb, but, unlike Sumerian, both perfective and imperfective forms were ergative as opposed to the absolutive intransitive conjugation.

In Late Hurrian aspectual distinctions (perfective/imperfective) gave place to the temporal ones (present/past/future), which embraced both the transitive and intransitive verb.

In Elamite the opposition past/non-past was known to both transitive and intransitive verbs. The past (perfective) forms distinguished between transitive verbs conjugated ergatively and intransitive ones conjugated absolutely. The imperfective (non-past) conjugation did not distinguish between transitive and intransitive verbs: both were conjugated according to the absolutive pattern.

The author traces back the formation of grammatical aspects in the languages under consideration to the point when the opposition action : state, which can be reconstructed in these languages, gave place to the opposition transitivity : intransitivity.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեր կարծիքով, միայն անցողական բայի ձևերում վկայված -ու ձևորդը համդիսանում է և՛ անցողական, և՛ անանցողական բայաձևերում համդիպող -ն ցուցչի բարբառային կամ արտասանական տարբերակը: Այս ձևորդի վերաբերյալ արտահայտվել են մաև այլ կարծիքներ. Ի. Մ. Դյակոնովը համեմատում է այն ուրարտական կատարյալ կերպի խոնարհման համապատասխան ձևերում վկայված -ne արտոյուտիվ շարքի օրյեկտային ցուցչի հետ [Дьяконов И. М., 1967, с. 444, прим.6; Diakonoff I. M., 1971, S. 111], իսկ Գ. Վիլհելմի կարծիքով, այն հրկրեկո մասնիկ է, որ միաժամանակ արտահայտում է 3 դ. սուբյեկտը և օբյեկտը [G. Wilhelm, 1992, S. 666]: Ի. Մ. Դյակոնովի մեկնաբանությանը հակասում է այն փաստը, որ հին խուտիերենին հայտնի է ուրարտական -ne դերանվանական ցուցչին համապատասխանող -ո ձևորդը, իսկ Գ. Վիլհելմի այն փաստարկի վերաբերյալ, որ կցական լեզուներում ևս հնարավոր է մեկից ավելի քերականական իմաստի արտահայտում մեկ ձևորդով, ասենք, որ կցական

լեզուներում մեկ դիրքում համատեղված են, մի կողմից դեմքի և թվի (մաև դասի), մյուս կողմից՝ ժամանակի և եղանակի կարգերը [Володин А. П., Храковский В. С., 1975, сс. 191-192], բայց ոչ սուբյեկտի և օբյեկտի:

Օգտագործված գրականություն

Խաչիկյան Մ. (Хачикян М. Л., Khačikyan M.)

1999 – The Hurrian Verb Revisited, *Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians* 10, Bethesda, pp. 257-265.

2004 - Կերպի քերականական կարգը շումերերենում, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ* XXIII, Երևան, էջ 497-506:

2005 - Вид/время в хурритском и урартском языках, *Эдубба вечна и постоянна* (Материалы конференции, посвященной 90-летию со дня рождения И. М. Дьяконова), СПб, сс. 242-247.

Володин А. П., Храковский В. С.

1975 – Типология морфологических категорий глагола (на материале агглютинативных языков), *Типология грамматических категорий*, М., сс. 170-196.

Дьяконов И. М. (Diakonoff I. M.)

1967 - *Языки Древней Передней Азии*, М.

1971 - *Hurritisch und Urartäisch*, München.

Hopper P. J., Thompson S. A.

1980 - Transitivity in Grammar and Discourse, *Language* 56/2, pp. 251-297.

Wilhelm G.

1992 - Zum hurritischen Verbalsystem, *Texte, Sätze, Wörter und Moneme* (Festschrift für Klaus Heger zum 65. Geburtstag), Heidelberg, SS. 659-671.